



J. Ramsey.

89899
P-89





ՊԵՏՆԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԷԼԵԶՎԻՖԱԿՈՒԼՏԵՏ


ՅԵՐԵՎԱՆ 1938

89/99
p-89

19 NOV 2011

ՀՈՎՀ. ԹՈՒՄԵՆՅԱՆ

և Մ.



ՔԱՌՅԵԿՆԵՐ

ՊԵՏՀԱՄԱՂՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

23.09.2013

3a 170



2689
38





Այս տարի մարտի 23-ին լրացավ հայ մեծագույն բանաստեղծ Հովհաննես Թումանյանի մահվան XV տարին:

Թումանյանը պատկանում է անցյալի այն խոշորագույն կլասիկների թվին, վորոնց անզուգական ստեղծագործական կարողութունները հավասար չափով հանդես են յեկել գրական բազմապիսի ժանրերում: Նրա անմահ պոեմները՝ Մարոն, Լուսեցի Սաբոն, Անուշը, Թմբկաբերդի առումը, Փարվանան, Սասունցի Դավիթը, Հազարան բլրույր, նրա լիբիկական բանաստեղծութունները, նրա պատմվածքներն ու հեքիաթները՝ Գիգորը, Մեռնի, Աբշալուրը, Քաջ Նազարը և մյուս գործերը—այս բոլորը վարակիչ ներշնչման և հոյակապ արվեստի սքանչելի կոթողներ են:

Արդարև, ի՞նչն է Թումանյանի ստեղծագործութունը դարձնում այնքան մեծ ու արժեքավոր, այնքան մեծ ու պայծառ, վոր ամենայն իրավամբ կարելի չէ համեմատել համաշխարհային գրականության մեծահանձար գրողների ստեղծագործութունների հետ, ինչպիսիք են՝ Ռուսթավելին, Պուշկինը, Շեքսպիրը, Գյոթեն և մյուս խոշոր գրողները:

«Մեծ արվեստագետները կենդանի չեն մեզ հա-

մար: Նրանց ջանքերն իշուր չեն անցել, նրանց լավագույն յերկերը արթնացրել են մտքեր և ոգ-նել ժողովրդին առաջ ընթանալու և զրանով իսկ գտնելու ազատագրման ուղին: Այլասիկները գեղարվեստական յերկերը, վորոնք կենդանի յեն կյանքի շնչով և մարդկային ջերմ սրտի բաբախյունով, կարող են ոգնել մեր յերիտասարդու-թյանը հասկանալու վոչ միայն անցյալը, այլև ներկան:

«Պրավդա»-յի այս նշանավոր տողերը ամբողջովին վերաբերում են նաև Թումանյանին: Յեւ իսկապես, ինչպես սիրում եր կրկնել Մ. Գորկին, միայն յերկրորդական գրողներն են փառաբանել Ֆեոդալիզմն ու կապիտալիզմը, իսկ մեծ գրողները լավագույնս ստեղծագործությունները «արթնացրել են մտքեր» և «ոգնել ժողովրդին առաջ ընթանալու և զրանով իսկ գտնելու ազատագրման ուղին»:

Թումանյանն անցյալի այդ մեծ արվեստագետ-ների հետ միասին, կողք-կողքի քայլում ե նոսի և առաջ իր անմահ ստեղծագործությունների ժողովրդականութեամբ, իր անսահման ժողովրդասիրու-թեամբ, նրա ստեղծագործությունների մեջ արտա-ցովել և աշխատավոր մասնասերի տաղանդն ու իմաստությունը, նրա ցատուճն ու բողոքը տիրող բռնակարական կարգերի և բարբարոսական տրագի-ցիաների դեմ, նրա անսահման ստեղծությունը ղեպի կալածածախրական-բուրժուական կարգերն ու «փո-

զի քսակի» ասպետները: Նրա արվեստի ժողովրդա-յնությունը ոտար և յիդել ամեն մի նեղ, ազգային սահմանափակության: Բուրժուական լիբերալ քնն-նադատությունը, ռեակցիոն նացիոնալիստական կեղ-տոտ թափթիռները, սպեցիֆիկ զբաղները և վուլ-գար սոցիալիզիզմի «պատուհաս-տեսաբանները» վոչ մի միջոցի առաջ կանգ չեն տուել Թումանյանի բա-նաստեղծական կերպարանքն աղավաղելու և կեղծե-լու բնագավառում: Նրանք աշխատել են Թումանյա-նին կապել նահապետական հետամնացության հետ, «հայրենի նահապետական տան» հետ այն ժամանակ, յերբ մեծ բանաստեղծի համար թանգ են յեղել բո-լոր ազգությունների աշխատավորները, նրանց լե-զուն, ֆուլկլորը, գրականությունը, կուլտուրան:

Թումանյանի բանաստեղծական խառնվածքի այս ինտերնացիոնալ գծերը, հասկանալի յե, վոր չեր կա-րող գուր գալ վերահիշյալ մարդկանց:

Լինելով աշխատավորության հետ կապված, պատ-կերացնելով նրա լավագույն ներկայացուցիչները ամենածանր կացությունն ու տրագիգիան, մեծ հու-մանիստ Թումանյանը բնականաբար ժողովրդի յեր-ջանիւթյան խնդիրը չեր կարող կապել կապիտալիզ-մի կամ կարլածատիրական կարգերի հետ: Դժգոհե-լով տիրող կարգերից, նա շարունակ աշխատավոր մարդկության համար յերազել ե մի վառ և յերջա-նիկ ապագա: Նա նույնիսկ հասել ե այն բարձր գի-տակցությանը, վոր այդ լավագույն ապագան ան-

հրամեշտ ե ձեռք բերել պայքարով: Այդ միտքը նա արտահայտել ե իր բազմաթիվ գրվածքներում: Հիշենք Սաաունցի Դավիթը, Չարի վերջը կամ Անբուն կկուն, վորը նույն Չարի վերջն ե՝ վերամշակված. հենց այդ վերամշակության մեջ միանգամայն պարզ յերևում ե, վոր «չարին» պայքարելով վոհնացնելու իր տեսակետը Թումանյանն ուղեցել ե ավելի խորացնել:

Հիշենք նաև հեղինակի գլուխ գործոց Հագարան րլլուլը: Այստեղ Թումանյանն ամենասուր հեղնանքի յե յենթաբնույթ այն մարդկանց, վորոնք վողորմելի վախկոտներ են, վարոնք համակերպվում են իրենց անմխիթար վիճակին: Պոեմի հերոսը՝ Արեգը, վոր գնում ե յերջանկություն բերող Հագարան րլլուլը գտնելու—նա շատ լավ գիտակցում ե, վոր այդ տունը զժվարությունները հողթահարելու ձեռք չի բերվի ե վառված ե զժվարությունների գեմ պայքարելու յեռանդով:

— Ի՞նչ են գեեր ե հրեշներ,
յերկյուղ հունեմ յես պապի
Յեվ իմ համբեն վոչ փոթորիկի,
վոչ տառապանք կկապի:

Թումանյանի լավագույն գործերը չէլին կարող մտքեր չարթնացնել ե չողնել «ժողովրդին առաջ ընթանալու» ե դրանով իսկ «գտնելու ազատագրման ուղին»: Ահա թե ինչու ժամանակն ե գեն շարտել այն տեղամար տեսակետը, վոր իբր թե Թումանյանին

խորի ե պայքարի անհրամեշտության գիտակցությունը, վոր նա տուտոյական ե, պեսիմիստ ե ե այլն, ե այլն:

Ըմբոստանալով կապիտալիստական հասարակության գեշտիչ եյության դեմ, յերագելով հաշտ ու խաղաղ մարդկության մասին, Թումանյանը բնականաբար պետք ե գտնվեր ե գտնվեց Հոկեմբերյան Սոցիալիստական Մեծ Հեղափոխությունը ցնծությամբ վողջունողների շարքում:

Թումանյանն աշխատավոր մարդկության ազատագրական մեծ պայքարի հերոսական բանակի կողմնացավ վոչ միայն վորպես պոետ, այլե վորպես մարդ ե քաղաքացի:

Մ. ե Մ.

40. 100. 4 36 P

Հիմնականում, համարներ
ներդրված ու հե. համարներ,
նրանք նույնի չհարկվում
նախ հարկային համարներ:

գրառ. համարներ

Հովհ. Թումանյանի ինքնագիրը



Ա՛նց կացա՛ն...
Որերս թրռան, ա՛նց կացա՛ն.
Ախ ու վախով, դարդերով
Սիրտըս կերա՛ն, ա՛նց կացա՛ն:

1890

Վերջացա՛վ...
Կյանքըս մաշվեց, վերջացա՛վ.
Ինչ հույս արի՛ փուչ երա՛վ,
Ինչ խընդուլթյուն՝ վերջը ցա՛վ:

1890

Հիմի բացե՛լ են հանդես
Յերգիչները իմ անտես.
Ջա՛ն, հայրենի՛ ծղրբիղներ,
Ո՞վ ե լրտում հիմի ձեզ:

1916 թ. հունիս

Յե՛տ չեկա՛վ...
Դընա՛ց, գընա՛ց, յե՛տ չեկա՛վ,
Անկուշտ մահի՛ն, սե՛վ հողի՛ն
Գերի մընաց, յե՛տ չեկա՛վ:

1916 թ. հունիս

Ո՞ւր կորա՛ն...
Մոտիկներըս ո՞ւր կորա՛ն.
Ինչքան լացի, ձե՛ն ածի՛
Ձե՛ն չի տրվի՛ն, լո՛ւտ կորա՛ն:

1916 թ. հունիս

Յերկու դարի արանքում,
Յերկու քարի արանքում,
Հոգնել եմ՝ նոր ընկերի
Ու հին ցարի արանքում:

1917 թ. հունվար 15

Առատ կրվինի կինը արդ,
Կրնկնի եգի գինը արդ,
Կրքարծրանա նրա տեղ
Ազատ, անկախ, կինը մարդ:

1917 թ. հունվար 16



Ժող է իմ վիշտն, անտի ու խոր,
Լիքն ակունքով հագարավոր.
Իմ գայրույթը լիքն է սիրով,
Իմ գիշերը լիքն աստղերով:

1917 թ. փետրվար 9



Բանի՜ մահ կա իմ սրբոտում,
Թափուր զահ կա իմ սրբոտում.
Ձե՞ դու յիշ ես մահացու.
Մահի ահ կա իմ սրբոտում:

1917 թ. նոյեմբեր 7

Կյանքից հարբած անցավոր,
Ահա դարձյալ անցավ որ,
Դու վազում ես դեպի մահ—
Մահը բռնում հանցավոր:

1917 թ. նոյեմբեր 10

Հին աշխարհքը ամեն որ
Հազար մարդ ե մրտնում նոր,
Հազար տարվան փորձն ու գործ
Ըսկրավում ե ամեն որ:

1917 թ. նոյեմբեր 11

Յե՛տ յեկե՛ք...
Դարնան վարար զետ յեկե՛ք,
Անցա՛ծ որեք, խի՛նդ ու սե՛ք,
Դարձե՛ք, իրար ճետ յեկե՛ք:

1917 թ. նոյեմբեր 11



Զուր եմ փախչում, ինձ խաբում,
Հազար կապ ե ինձ կապում.
Ամենքի ճետ ապրում եմ,
Ամենքի չափ տառապում:

1917 թ. նոյեմբեր 12



Ո՛վ իմանա՛ ուր ընկանք,
Քանի որվա հյուր ընկանք,
Սերն ու սիրտն ել յերբ չըկա՝
Կըրա՛կ ընկանք, զո՛ւր ընկանք:

1917 թ. նոյեմբեր 30



Ինչքան ցավ եմ տեսել յես,
Նենգ ու դավ եմ տեսել յես,
Տարեկ, ներեկ ու սիրեկ,—
Վատը՝ լավ եմ տեսել յես:

1917 թ. դեկտեմբեր 24



Յերագումրս մի մարի,
Մոտրս յեկավ հարցմունքի.
— Աստված պանի քո վորդին,
Վրճեց ևր համր իմ ձագի...

1917 թ. դեկտեմբեր 24

Զանի՜ ձեռքից եմ վառվել,
Վառվել ու հուր եմ դառել,
Հուր եմ դառել՝ լույս տրվել,
Լույս տալով եմ ըսպառվել:

1917 թ. դեկտեմբեր 24

Մընացել ե բերող մեզ,
Հաղթանակի յերթը մեզ.
Անց են կացել ով կային,
Հիմի կրգա հերթը մեզ:

1917 թ. դեկտեմբեր 26

Հոգիս՝ տանը հաստատվել—
Տիեզերքն ե վողջ պատել.
Տիեզերքի տերն եմ յես,
Ո՞վ ե արդյոք նրկատել:

1917 թ. դեկտեմբեր 27

Վո՛նց ե ժպտում իմ հոգին
Չարին, բարուն,—ամենքին.
Լույս ե տալիս վողջ կյանքիս
Ու են նամիկիս անմեկին:

1918 թ. հունվար 4

Ի՞նչ ես թրոշում, խեղ-դեղ սիրտ,
Հազար բանի յետեղ, սի՛րտ
Յես վո՛նց հասնեմ հազար տեղ
Քեզ պես թափով, թեթեղ, սի՛րտ:

1918 թ. հունվար 25

Իմ սուր, արթուն ահանջում
Մի խոր ձեն ե միշտ հրնչում,
Անհուն, անքուն կարոտով
Իրեն մոտ ե ինձ կանչում:

1918 թ. հունվար 26

Ո՞վ ե ձեռքով անում, ո՞վ,
Հեովից անթիվ ձեռքերով՝
— Զա՛ն, հայրենի՝ անտառներ,
Դուք եք կանչում ինձ ձեր քով:

1918 թ. փետրվար

Աշնան ամպին ու զամպին,
Մոլոր նքստած իր նրմբին,
Լոռու հանդում՝ մի արտուտ
Եսայում ե միշտ իմ ճամփին:

1918 թ. փետրվար



Մի հավր զարկի յես մի որ.
Թըռա՛վ, զընաց վիրավոր:
Թըռչում ե միշտ իմ մըտքում
Թե՛վր արնոտ ու մոլոր:

1918 թ. փետրվար 2



Լինե՛ր հեռու մի անկյուն,
Լինե՛ր մանկան արդար քուն,
Յերագի մեջ յերջանիկ,
Հաշտ ու խաղաղ մարդկություն

1918 թ. փետրվար 2

Յերկու շիրիմ իրար կից,
Հավերժական լուռ դրրկից,
Թախծում են պառլ ու խորհում
Թե՛ ի՞նչ տարան աշխարհքից:

1918 թ. փետրվար 4

Կրթացնում են, արտորում
Արտուտները արտերում,
Թըրջում մանուկ հոգուս հետ,
Ճախրում, ճըխում յեթերում:

1918 թ. հունիս



Բերանն արնոտ Մարդակերը
են անբան
Հագար դարում՝ հագիվ դառավ
Մարդասպան.
Չեոքերն արնոտ գրնում ե նա
դեռ կամկար,
Ու հեռու յե մինչեվ Մարդը
իր նամիբան:

1918 հոկտեմբեր



Մեռա՛ն, մեռա՛ն... Յեվ, ահա,
Խառնըվել են կյանք ու մահ.
Չեմ հասկանում աշխարհի
«Կան ու չրկան» յես հիմա:

1919 թ. հոկտեմբեր 8

✓ Հե՛յ ագահ, մարդ, հե՛յ անհոգ մարդ,
միտքըդ յերկար, կյանքըդ կարճ,
Քանի՛ քանիսն անցան քեզ պես,
քեզնից առաջ, քո առաջ.
Ի՛նչ են տարել նրբանք կյանքից,
թե ինչ տանես դու քեզ հետ,
Խաղաղ անցիր, ուրախ անցիր
յերկու որվան ես ճամփեդ:

1919 թ. նոյեմբեր

Դու մի անհայտ Բանաստեղծ ես,
Հրտեսնված մի՞նչ եսուր.
Առանց խոսքի յերգ ես թափում
Հայաքներով լուսավոր:
Յես ել, ասենք, զարմանալի
ընթերցող եմ բախտավոր,
Վոր կարդում եմ եղ յերգերը
Եսրան հեշտ ու եսրան խոր:

1919 թ. նոյեմբեր

✓
Ազատ որը, ազատ սերը,
ամեն բարիք իր ձեռքին,
Տանջում, տանջվում, փորոնում ե
ու դժբախտ ե նա կրկին.
Ե՛յ անխելք մարդ, յերբ տի թողնես
ապրողն ապրի սրբտալի,
Յե՞րբ տի ապրես ու վայելես
ես աշխարհքը շեն ու լի:

1919 թ. նոյեմբեր

✓ Արեվելքի յեղեմներին
 իջավ պայծառ իրիկուն,
 Հերիաթական պալատներում,
 քսպասում են իմ հոգուն.
 Ի՞նչ եմ շինում ես ցեխերում,
 աղմուկի մեջ վայրենի...
 Ա՛խ, թե նորից զրտնեմ ճամփան,
 դեպի ենտե՛ղ, դեպի տո՛ւն...

1919 թ. նոյեմբեր 21

Վո՞ր աշխարհքում ունեմ շատ բան.
 միտք եմ անում՝ ե՞ս, թե եմ.
 Մեջ տեղ կանգնած միտք եմ անում,
 չեմ իմանում՝ ե՞ս թե եմ.
 Աստված ինքն եւ, տարակուսած,
 չի հասկանում ինչ անի.
 Տանի՛, թողնի՛, — վո՞րն է բարին,
 վո՞ր սահմանում, ե՞ս թե եմ:

1919 թ. նոյեմբեր

Քուն թե արթուն՝ որիս շատր
 յերազ յեղալ, անցկացալ,
Յերազն ել, նորք ու խուտափուկ,
 վրտազ յեղալ, անցկացալ.
Վրտազ անցան յերազ, մորազ,
 ու չք հասա վոչ մեկին,
Կյանքս թեթեւ տանուլ տրված
 զրրազ յեղալ, անցկացալ:

1919 թ. դեկտեմբեր 6

Լուսը լուսին քո ժպիտն ե.
 իմ՝ յերեսին ճառագում,
Յերք, ա՛խ, արդեն անբույժ զարկած,
 դեպի մահն եմ յես հագվում՝
Եսպես են վառ արեգակի
 շողերի տակ կենսածոր
Կայծակնահար կաղնին վոտքի
 չորանում ե որեցոր:

1920 թ.

Կորցրել եմ, ո՞ւր գրտնեմ,
Տեղը իմաց տուր՝ գրտնեմ,
Ման եմ գալի յես մըթնում
Քեզ մոտ գալու, դուռ գրտնեմ:

1920 թ. փետրվար

Ի՞նչ իմանաս ըստեղծողի
գաղտնիքները անմեկին. —
Ընկեր տվա՛վ, իրար կապեց,
ես աշխարհքում ամենքին.
Բանաստեղծին թողեց մենակ
մեն ու մենակ իրեն պես,
Վոր իրեն պես մըտիկ անի
ամեն մեկին ու կյանքին:

1920 թ, մարտ 30

Խաչաման ասավ իր սիրունուն.
— փոքրդ ըզգույշ դիր հողին,
Ո՛վ իմանա՛ փոր սիրունի,
քիքն ես կոխում դու հիմի...»
Հե՛յ, ջա՛ն, մենք եւ ըզգույշ անցնենք,
ո՛վ իմանա, թե հիմի
են սիրունու քի՞քն ենք կոխում,
թե հուր լեզուն Խաչամի:

1920 թ. ապրիլ 6



Մ
Յերնեկ եսպես՝ անվերջ քեզ հետ—
իմ կյանքի հետ լինեյի.
Հազար յերնեկ՝ դաշտում մենակ՝
յերկընքի հետ լինեյի.
Բայց ո՛վ կրտա են վայելքը՝
ինքըս ինձ եւ չըզգայի,
Ու հալվեյի, ծավալվեյի,
ամենքի հետ լինեյի...

1920 թ. մայիսի 12



Ամեն մի սիրտ ցավով լցրեց
մեր դարում,
Ցավոտ սրտով աշխարհ լրցվեց
մեր դարում.
Ցավոտ աշխարհքն յեկավ լցվեց
բովանդակ
Իմ սիրտը քաց, իմ սիրտը մեծ
մեր դարում:

[1921]

Առատ, անհատ Աստծու նրման՝
միշտ տեղալուց հոգնել եմ յես.
Հոգիս ծարավ՝ սրբան-նրբան
մըտիկ տալուց հոգնել եմ յես.
Մինը պիտի գար իմ դեմը՝
ճոխ ու շրոայլ անհաշիվ,
Ամեն ճամփում ըսպասելուց
ու փնտրելուց հոգնել եմ յես:

1921 թ. փետրվար 7

Յես շընչում եմ միշտ կենդանի
Աստծու շունչն ամենուր.
Յես քսում եմ նրա անուտ
կանչն ու հունչը ամենուր.
Վեհացնում ե ու վերացնում
ամենապուր իմ հոգին
Տիեզերքի խոր մեղեդին
ու մըրմունջը ամենուր:

1921 թ. փետրվարի 14

Արյունալի աղետներով,
աղմուկներով ահարկու,
Արեվմուտքի ըստրուկները
Մեքենայի յեվ վոսկու՝
Իրենց հոգու անապատից
խուսափում են խուռներամ՝
Դեպ Արեվելքն աստվածային—
հայրենիքը իմ հոգու...

1921 թ. մայիսի 1

Ամեն անգամ քո տրվածից
 յերբ մի բան ես դու տանում,
Ամեն անգամ՝ յերբ նայում եմ,
 թե ի՞նչքան ե դեռ մնում,—
Զարմանում եմ, թե ո՞վ Շոալ,
 ի՞նչքան շատ ես տրվել ինձ,
ի՞նչքան շատ եմ դեռ քեզ տալու,
 վոր միանանք մենք նորից:

1921 թ. մայիսի 2


Հազար տարով, հազար դարով
 առաջ թե յետ, ի՞նչ կա վոր.
Յես յեղել եմ, կա՞մ կըլինեմ
 հար ու հավետ, ի՞նչ կա վոր
Հազար եսպես ծեփեր փոխեմ,
 ծեփը խաղ ե անցավոր,
Յես միշտ հոգի, տիեզերքի
 մեծ հոգու հետ, ի՞նչ կա վոր:

1921 թ. մայիսի 3



Ասի. «հենց լուկ ես անյունն ե
ու անունը, վոր ունեմ...»
Յերբ ծառագեց անծայրածիր
քո ժպիտը հոգուս դեմ.
— Ի՞նչ ե անյունն եղ անկայուն,
ու անունը, վոր ունես,
Դու Աստվա՛ծ ես, դու անհո՛ւն ես,
անանուն ես ու անյես...»

1921 թ. մայիսի 6



Աստեղային յերազների
աշխարհքներում լուսակալժ,
Մեծ խորների խոյանքների
հեռուներում անարատ,
Անհիշելի վերհուշերի
մըշուշներում նրբադուտ՝
Յերբեմ՛ն, ասես, ըզգում եմ յես,
թե կը հասնեմ Երբս մոտ...

1921 թ. մայիս 16

Բարձր ե հրնոց աշխարհքն Հայոց
ու Մասիսը յերկնավետ.
Իմ խոր հոգին են բարձունքին
խոսք ե բացել Նըրա հետ—
Անհաս բանից, քսկգբանից.
յերբ չըկան ել դեռ չըկար,
Մինչեվ վախճանն անվախճանի
քրննում ե դարեդար:

1921 թ. մայիսի 21

Ո՛վ անճառ Մին, վոր ամենին
միացնում ես մի կյանքում,
Ամեն կյանքում ու յերակում
անտես, անկեզ ըորընդում,—
Վողջ ազատ են ու հարազատ
ես աշխարհքում Բեզանով,
Վողջը Բո մեջ՝ անմահ, անվերջ՝
Բեզ են յերգում Բո ձենով...

1921 թ. դպրոստ 3

Աստծու քանտն են տանարները—
աշխարհքներում բովանդակ.
Իբր ենտեղ ե ապրում տերը,
պաշտողների փակի տակ:
Հարկավ՛ ազատ նա ժրպտում ե
ամենուրեք ամենքին,
Բայց դու նայիր խեղճ ու կրքակ
մարդու գործին ու խելքին:

1921 զգոսոսի 25

Կյանքըս արի հրրապարակ,
փոռի կոխան ամենքի.
Խափան, խոպան ու անպրտուղ,
անցավ առանց արդյունքի:
Ի՛նչքան ծաղիկ պիտի բուսներ,
փոր չբքուսավ ես հողին...
Ի՛նչ պատասխան պիտի յես տամ
հող ու ծաղիկ տրվողին...

1921 թ. սեպտեմբեր 5

իմ կրնունքին յերկինքը՝ ժամ,
արեւը՝ ջահ սրբազան,
Ժիածանը՝ նարոտ յեղավ,
ամենքի սերըն՝ ավազան.
Սարը յեղավ կրնքահայրս,
ցողը՝ մշուտոն կենսապետ,
Ու կընքողըս նա ինքըն յեղավ,
վոր սահմանեց ինձ պոետ:

1921 թ. հոկտեմբեր

Հե՛յ ճամփաներ, ճամփանե՛ր.
Անդարձ ու հին ճամփաներ,
Ռ՞վքեր անցան ձեզանով,
Ռ՞ւր զընացին, ճամփաներ:

1922 թ.

Աղբյուրները հընչում են ու անց կենում,
Ժարավները տենչում են ու անց կենում,
Ու յերջանիկ ակունքներին յերազում
Պոետները կանչում են ու անց կենում:

1922 թ. հունիսի 9

Խ Ս Դ Ա Ն Ի

Ասում են թե հազար տարին
մի անգամ
Մի փրրկիչ ե աշխարհ գալիս,—
մի պատգամ.
Մին, յերբ յեկավ, ծընված չեյինք
մենք մորից,
Մին եւ, յերբ գա, մեռած կըլնենք
ցավերից:

1922 թ. հուլիս

Անցա՛ր քարը սրբոխի վրա՛
 ջրրի պես.
 Մենևակ տառտաակ ու փուշ տարա՛
 ջրրի պես.
 Իմ՝ աշխարհքում՝ հանգիստ չառա՛
 ջրրի պես,
 Ու գրնացի, յետ չըդառա՛
 ջրրի պես:

1922 թ. հունիս

Նա վոր գրնաց՝ սիրտս եւ գրնաց
 ու յետ չեկաւ իր մօտից
 Աչքս ճամփին ու ականջս
 միշտ դռանն ե կարոտից.
 Աչքս ե դառնում՝ մին ականջիս,
 Թե լուր չունե՞ս են որից,
 Մին ականջս ե դիմում աչքիս,
 Թե չե՞ս տեսել դու նորից...

1922 ք. հուլիս

Ծուխըդ կելնի պատուհանից յերբեվե.
Հալքըդ կերթա իրեն բընից յերբեվե.
Թեկուզ մի դար ապրես սրբտով մըտերմիդ
Զարի սրբտով կելնես տանից յերբեվե:

1922 թ. հուլիս



Տիեզերքում աստվածային
մի ճամփորդ ե իմ հոգին.
Յերկրից անցվոր, յերկրի փառքին
անհաղորդ ե իմ հոգին.
Հեռացել ե ու վերացել
մինչ աստղերը հեռավոր,
Վար մ'նացած մարդու համար
արդեն խորթ ե իմ հոգին:

922 թ. հուլիսի 8



Ենթան շատ են ցավերն, 'ավերն
իմ սրբտում,
Ենթան տըրտում կորած լավերն
իմ սըրտում...
Չեմ ել հիշում չար ու խավար
են ժամին՝
Յերբ են փայլել ուրախ որերն
իմ սրբտում:

1922 թ. հունիսի 12

Յե՛կ, Խաբանի՛ ու հեռացիր
ես չարովժյան զընդանից,
Շեն ու շենսիրտ, անցի՛ր, գնա
ցավ ու հոգսի ես տանից.
Կյանք ես առել յերկրնքիցը,
դա շըղթա յե դառել քեզ,
Յետ տուր իրեն տըված կյանքը,
թըռի՛ր ազատ ամենից:

1922 թ. հունիս

Հոգուդ հավեր հանկարծ թըռավ՝
ի՞նչ ես դու.
Ծածփիդ կիսում՝ ձիդ վոր կորավ՝
ի՞նչ ես դու.
Յեթե մարդ ես—կյանքը փոխ ե
տըված քեզ,
Փոխ տըվողը վոր յետ տարավ՝
ի՞նչ ես դու:

1922 թ. հուլիս

— Ես ե, վոր կա... ճիշտ ես ասում.
[Թասըդ բե՛ր:
Ես ել կանցնի հանց յերագում,
[Թասըդ բե՛ր:
Կյանքն հոսում ե տիեզերքում
զընգալեն,
Մեկն ասքում ե, մյուսն սպանվում
[Թասըդ բե՛ր:

1922 թ. ոգոստիսի 14

023

Պատ. խմբագիր Ա. Տ ե ռ ե ե ռ յ ա ն
Տեխ. ձեկավորումը [redacted]
Կազմի ռեկեմ պորտենն նկարել է
Ա. Ա. Մ խ ի ր ա ռ յ ա ն Ե

—
Տպագրված է Պետական տպարանի
Հրատարակչության Է. տպարանում
Յերեվան, Տեղյան փողոց № 68.
Գլավ. լիազ. հ—3508: Պատվ. 102
Տիրում 3000 (1000-ը, տեղի բղբով)



Դիմեր տեղի բղբով 2 ռ., հատ. բղբով 1 ռ. 50 կ. (կազմով)

ՀՀ Ազգային գրադարան



NL0342303

32446